ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N 55

« 15 » հուլիսի 2011թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Գետաշեն համայնքի ավագանու 2011 թվականի հուլիսի 7-ի թիվ 4 նիստի որոշումները:

Առդիր 5 թերթ:

Գետաշեն համայնքի ղեկավար Գ. Հովհաննիսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԳԵՏԱՇԵՆԻ ...

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 7023-11
«15» 07 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

07 Հուլիսի 2011թ. N 1

## ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել համայնքի ավագանու թիվ 4 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ Ս. Բաղդասարյան
Գ. Զուլոյան
Գ. Կոստանյան
Մ. Մուրադյան

Նիստի նախագահ Գ. Հովհաննիսյան
Նիստի քարտուղար Ս. Թադևոսյան

Հավելված
Գետաշեն համայնքի ավագանու
07.07.2011թ. 4-րդ նիստի N 1 որոշում

# ՕՐԱԿԱՐԳ

1. N 4 ավագանու նիստի օրակարգի հաստատման մասին:
(Զեկ. նիստի քարտուղար Ս. Թադևոսյան)
2. «Գետաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Նախադպրոցական միկրո-ծրագրին ընթացիկ դրամաշնորհ տալու մասին
(Զեկ. համայնքի ղեկավար Գ. Հովհաննիսյան)
3. Գետաշեն համայնքի որոշ անապահով ընտանիքների սոց. օգնություն տրամադրելու մասին
(Զեկ. համայնքի ղեկավար Գ. Հովհաննիսյան)
4. Գետաշեն գյուղական համայնքի 2010 թվականի նոյեմբերի 24-ի «Գետաշեն համայնքի 2011թ. բյուջեն հաստատելու մասին» N 4-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
(Զեկ. համայնքի աշխ. առաջատար մասնագետ Ս. Թադևոսյան )

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

07 Հուլիսի 2011թ. N 2

## «ԳԵՏԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻԿՐՈԾՐԱԳՐԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման Մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով «Գետաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Գ. Մուքոյանի ներկայացրած «Նախադպրոցական Միկրոծրագրի» բյուջեն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Գետաշեն համայնքի 2011թվականի բյուջեից 2000.0 հազար (երկու միլիոն) դրամ ընթացիկ դրամաշնորհ տալ «Գետաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Նախադպրոցական միկրոծրագրին»
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ Ս. Բաղդասարյան

Գ. Զուլոյան

Գ. Լուստանյան

Մ. Մուրադյան

Նիստի նախագահ՝ Գ. Հովհաննիսյան

Նիստի քարտուղար՝ Ս. Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

07 հուլիսի 2011թ. N 3

# ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՐՈՇ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՍՈՑ. ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ Գետաշեն համայնքի վեց անապահով ընտանիքների կալ ֆինանսական օգնություն համայնքի 2011թ. բյուջեի սոց. օգնության ֆոնդից:

   Չորս ընտանիքի՝ Համիկ Եփրեմյանին, Եղիշ Ասատրյանին, Լալա Հայրապետյանին և Եսայի Թադևոսյանին 50.000 (հիսուն հազար) դրամ:

   Երկու ընտանիքի՝ Գյուլնարա Գրիգորյանին և Քաղցրիկ Մուրադյանին 30.000 (երեսուն հազար) դրամ:

   Ընդամենը 260.000 (երկու հարյուր վաթսուն հազար) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ Ս. Բաղդասարյան
Գ. Զուլոյան
Գ. Կոստանյան
Մ. Մուրադյան

Նիստի նախագահ Գ. Հովհաննիսյան
Նիստի քարտուղար Ս. Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

07 հուլիսի 2011 Թ. N 4-Ն

# 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի «ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 4-Ն ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության 2002թվականի մայիսի 7-ի օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով

ԳԵՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Գետաշենի գյուղական համայնքի ավագանու 2010 թ. նոյեմբերի 24-ի «Գետաշեն համայնքի 2011թ. բյուջեն հաստատելու մասին» N 4-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 2000.0 հազար (երկու միլիոն) դրամ տեղափոխել 01-6-1-ի 4637 հոդվածին,
   2) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 2000.0 հազար (երկու միլիոն) դրամ հատկացում կատարել ֆոնդային բյուջեին հետևյալ կերպ՝
   01-1-1-ի 5122 հոդվածը ավելացնել 821.0 հազար (ութ հարյուր քսանմեկ հազար) դրամով,
   01-6-1-ի 5131 հոդվածը ավելացնել 560.0 հազար (հինգ հարյուր վաթսուն հազար) դրամով:
   06-3-1-ի 5113 հոդվածը ավելացնել 619.0 հազար (վեց հարյուր տասնինը հազար) դրամով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ ավագանու անդամներ՝ Ս. Բաղդասարյան
Գ. Զուլոյան
Գ. Կոստանյան
Մ. Մուրադյան

Նիստի նախագահ՝ Գ. Հովհաննիսյան
Նիստի քարտուղար՝ Ս. Թադևոսյան